# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021 թ. N 98-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը՝*

1.1. Ջերմուկ համայնքի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը ամբողջությամբ չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ Ս. Պապոյան*

1.2. «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 87-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | | | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Մկրտչյան Սևակ Վանիկի | | | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | | | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | | | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | | | |
| Գևորգյան Մանան Աղվանի | | | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...14... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021 թ. N 99-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 58-րդ կետի հիման վրա՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Թույլատրել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմին համայնքի կարիքների համար՝ Ջերմուկ քաղաքի ճոպանուղու սպասասրահի աստիճանավանդակի և վերևի հարթակի տանիքածածկի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի սեպտեմբերի 13-ին հայտարարված՝ ՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման ընթացակարգը հայտարարելու չկայացած՝ գնման պահանջի դադարման հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | | | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | | | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Մկրտչյան Սևակ Վանիկի | | | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | | | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | | | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | | | |
| Գևորգյան Մանան Աղվանի | | | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...23... դեմ-...0... ձեռնպահ- ...1...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021 թ. N 100-Ա

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկի գործունեությունը՝ գրադարանային գործը համայնքում վերապահելով «Ջերմուկ համայնքի մարզամշա–կութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Իրավունք վերապահել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմին սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային հիմնարկը հանելու իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հաշվառումից, ինչպես նաև հիմնարկի գործունեության դադարեցման պահից դրա հաշվեկշռում մնացած գույքն ամրացնել, իսկ պարտավորությունները փոխանցել «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 1-ից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | | | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | | | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Մկրտչյան Սևակ Վանիկի | | | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | | | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | | | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | | | |
| Գևորգյան Մանան Աղվանի | | | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....14.... դեմ-.....0.... ձեռնպահ- ....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021 թ. N 101-Ա

### «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 100-Ա որոշմամբ Ջերմուկ համայնքում գրադարանային գործի կազմակերպումը «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին (այսուհետ՝ ՀՈԱԿ) վերապահելու հանգամանքով պայմանավորված ՀՈԱԿ-ի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 1-ից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | | | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | | | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մկրտչյան Սևակ Վանիկի | | | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | | | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | բացակա | | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | | | |
| Գևորգյան Մանան Աղվանի | | | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- 14 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

*Հավելված*
*Ջերմուկ համայնքի ավագանու*
*2021 թ. դեկտեմբերի 27-ի N 101-Ա որոշման*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*(նոր խմբագրությամբ)*

## «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկի իրավահաջորդը:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է համայնքում սպորտի և մշակույթի ոլորտների համալիր ու շարունակական զարգացմանը:
2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ենթաօրենսդրական ակտերով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
3. Կազմակերպության հիմնադիրը Ջերմուկ համայնքի ավագանին է:
4. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման և դադարում լուծարման պետական գրանցման պահերից:
5. Կազմակերպությունը ստեղծված է անժամկետ:
6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:
7. Կազմակերպությունն ունի առանձնացված և հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդես գալ միայն հիմնադրի որոշմամբ և հաշվետու է հիմնադրին:

9. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց 7/1:

11.Կազմակերպությունում արգելվում է կրոնական և քաղաքական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

12. Կազմակերպության անվանումն է՝

*հայերեն լրիվ՝* «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունՀ

*կրճատ՝* «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿՀ

*ռուսերեն լրիվ՝* ,,Спортивно-культурный центр общины Джермук,, Общественная некоммерческая организация,

*կրճատ՝* ,,Спортивно-культурный центр общины Джермук,, НКО

## *II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

13. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

ա) սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային, մարզական, բնապահպանական հասարակական, ինչպես նաև՝ համայնքային նշանակություն ունեցող ծրագրերի և միջոցառումների կազմակերպում ու անցկացում.

բ) երիտասարդների, դեռահասների, երեխաների և մեծահասակների շրջանում մարզական պարապմունքների կազմակերպում.

գ) համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանում և ամրապնդում, ազգային ու համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորում.

դ) համայնքում շախմատի և ֆուտբոլի զարգացմանն ու մասսայականացմանը նպաստող կրթական, մարզական, կազմակերպչական և այլ բնույթի գործունեության իրականացում.

ե) շախմատի և ֆուտբոլի մարզաձևերով զբաղվող ինչպես դպրոցական, այնպես էլ չափահաս տարիքի անձանց ինքնադրսևորմանն աջակցություն՝ այդ նպատակով պարբերաբար կազմակերպելով առաջնություններ, մարզային, հանրապետական և միջազգային մրցումներին մասնակցություն.

զ) մշակութային և ակումբային տարաբնույթ միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ գյուղական բնակավայրերում. գյուղական բնակավայրերում ակումբային մշակույթի զարգացում

է) գրադարանի հավաքածուի անընդհատ համալրման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում, գրադարանի հավաքածուն համալրող նյութական կրիչների գրանցում, ցուցակագրում, դասակարգում, դրանց գրացուցակի և մատենագիտության կազմում,

ը) գրադարանային փաստաթղթերի և այլ բնույթի տեղեկույթի հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման տրամադրում, գրադարանի

հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիության ապահովվում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

թ) գրադարանից օգտվողների համար որոկյալ ծառայությունների մատուցման ապահովում,

14. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման և ինքնավարության սկզբունքների վրա: Կազմակերպության գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության՝ նպաստելով պետական, հասարակական և բիզնես սեկտորների համագործակցությանը:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են կազմակերպության հիմնադիրը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը:

16. Հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնականապես լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

17. *Հիմնադրի* բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3)կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը

5)կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

6) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշիռի հաստատումը.

7) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

18. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

19. *Համայնքի ղեկավարը՝*

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ըստ անհրաժեշտության՝ հանդես է գալիս հիմնադրի անունից,

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա

գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Կազմակերպության գործադիր մարմինը տնօրենն է, որը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը:

21. Տնօրենն օրենքներով, համայնքի ավագանու և ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

22. Տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը ստորագրում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

23. *Կազմակերպության տնօրենը՝*

1) առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր,

2) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

3) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

4) տնօրինում է կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները.

5) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

6) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

7) բացում է բանկային հաշիվներ.

8) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, նշանակում դրանց ղեկավարներին.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

24. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

## IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

25. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

26. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

Սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքը (ներառյալ՝ անշարժ գույքը)՝ կարող է օտարվել (վաճառվել, նվիրվել, դուրս գրվել) կամ վարձակալությամբ տրվել միայն հիմնադիրի գրավոր համաձայնությամբ:

Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքը հիմնադրի սեփականությունն է:

Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

27. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

28. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

29. Կազմակերպությունն իրավունք չունի առանց հիմնադրի գրավոր համաձայնության իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

30. Կազմակերպությունը իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

31. Գրադարանային գործի շրջանակներում՝ գրադարանային հավաքածուի համալրման համար կազմակերպությունը իրավունք ունի ինքնուրույն որոշելու և օգտագործելու համալրման տարբեր աղբյուրների հնարավորությունները. գրահրատարակիչ ու գրավաճառ կազմակերպություններ, հաստատություններ ու անհատներ: Վերջիններիս հետ կնքում է պայմանագրեր, որոնք պարտադիր պետք է հաստատվեն համայնքի ղեկավարի կողմից:

32. Գրադարանային հավաքածուի համալրման գործում կազմակերպությունը հաշվի է առնում գրադարանից օգտվողների իրազեկման-մատենագիտական պահանջները և հետաքրքրությունները: Պարբերաբար ուսումնասիրում է այդ պահանջները, կատարում վերլուծություններ, ձեռնարկում միջոցառումներ մերժումները նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Ամեն տարի մինչև հոկտեմբեր ամսվա 1-ը հիմնադրին է ներկայացնում գրադարանային հավաքածուի համալրման և գրադարանի պահպանման հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը,

33. Կազմակերպությունն իրավունք ունի գրադարանի հավաքածուից դուրս գրելու և օտարելու նյութական կրիչներ՝ համաձայնեցնելով հիմնադրի հետ,

34. Կազմակերպությունը պարտավոր է գրադարանն ապահովել անվտանգության պահպանման անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ու պայմաններով (հակահրդեհային, ազդարարման, պահպանության, ջրահեռացման, օդափոխության և այլն),

35. Կազմակերպությունը սահմանված կարգով կազմում և ներկայացնում է վիճակագրական հաշվետվություններ, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելով՝ հաստատում է գրադարանի ծառայություններից օգտվելու կանոնները: Ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրազեկում է այդ կանոնների մասին, պահանջում է գրադարանին պատճառված վնասի փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգով,

36. Կազմակերպությունը պարտավոր է պահպանել գրադարանից օգտվողի հարցումների և օգտագործած տեղեկույթի գաղտնիությունը՝ որպես նրա անձնական տեղեկույթ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

37. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

38. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

39. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

40. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

41. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝*

*Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021 թ. N 102-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասը և ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով ու «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 47-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 87-Ա որոշման հավելվածի՝ համայնքի ավագանու կանոնակարգի 100-րդ կետի 1-ին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ *«Ավագանու նիստի սիրողական տեսաձայնագրումը թույլատրելի է միայն համայնքի ղեկավարի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա, արգելվում է սիրողական տեսաձայնագրության հրապարակումը, տարածումը, ուղիղ հեռարձակումը ցանկացած լրատվական և (կամ)սոցիալական հարթակում:»:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | | | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | | | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Մկրտչյան Սևակ Վանիկի | | | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | | | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | | | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | | | |
| Գևորգյան Մանան Աղվանի | | | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...12... դեմ-...2... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ